

ՎԱՐՁՈՒԹԻՒՆ "ՆՈՐ ՕՐ", Ի

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ Է ԹՂԹԱԿՅՈՒԹԻՒՆ

ՊՆՏԵ Ե ՈՒՂՂԱԿ ԱՐ

Վարչութիւն ՆՈՐ ՕՐ Լրագրի

ԳԱՀԻՐԷ

Նամակատուի Թիւ 117

DIRECTION DU JOURNAL

NOR-OR

CAIRE, B. P. N° 117

ՆՈՐ-ՕՐ

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՍԵՊՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԼԱՍՐԱՆ-ԸՆԹԵՐՅԱՏԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ԵՄԱԿՈՒ ՕՐԵՐԸ

ԲԱԿԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ե Գ Ի Պ Տ Ո Ս ՂՐ. ՈՂՋ

Գանձի համար	Տարեկան	50
»	Վեցամսեայ	30
Շրջակայից »	Տարեկան	60
»	Վեցամսեայ	35

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ

Տարեկան	Տրանզ	18
Վեցամսեայ	»	10

ԲՈՒՍԻՈՑ ԵՒ ԿՈՎԱՍԻ ՀԱՄԱՐ

Տարեկան	Բուրի	7
Վեցամսեայ	»	4

ԲԱԿԱՆՈՐԴԱԳԻՆԸ ԿԱՆԵԿ Է

ԵՒ ԹՂԹԱՍՏԻ ԾԱԵՐ:

Թերիկ Վարչութեանը վրայ է:

Ձեռագիրներն ետ չեն դարձուիր:

Արտոնագր. ժ. ՄԻՒՆԻՅԵ:

ՈՐԲԵՐՈՒ ՀԱՐՑԸ

Այս շաբթուան համոզ թղթաբերով տխուր տեղեկութիւններ կ'ստանանք Մայր-հայրենիքէն. որբերը չ'են վայելքը ակնկալուած պաշտպանութիւնը, չ'են ստանար հարկաւոր սնունդը, չ'են պատասխարուիր, ու, որ ստակալին է, կը դրկուին ազգային դատարարութիւնէն: Ահա՛ հարց մը, որ իր բոլոր սև գոյներովը կը ներկայանայ մեզ: Որբերը ձեռքէ կ'ընեն. այս աղաղակը կը լսուի Հայաստանէն ու կիրիկիայէն:

Սովը, հարկերու անտանելի բեռը, տիրող յոռի և աւերիչ վարչութիւնը, կամ աւելի ճիշդը, անիշխանութիւնը, առևտրական ամբողջիւնն ու անտեսական տաղանայր. այս ամենը բնութիւնը չունին սիփեկու որբերուն թշուառութիւնը, որ, վրդովեցուցիչ համեմատութիւններով կ'աճի օրէ օր: Ի՞նչ կրնանք ընել. ընդհանուր աղէտը դարմանել՝ այդ հեղինակութիւնը չունինք, սակայն, այդ աղէտը զոհերէն մեզ կտակուած մեր սրտին հատորիկներն ազատել ներկայ անխուսափելի կորուստէն, քիչ շատ ապահովել անոնց կացութիւնը. դա ո՛չ այնչափ դժուար է: Մեր մէջ ունինք կազմակերպութիւններ, որոնցմէ կը սիրենք յուսալ մեր ապագայ բարեկալութիւնը. անոնք կը շարունակեն իրենց գործը, մտքերը լարուած պահել դէպ ի մեծ նպատակը, ազգին փրկութիւնը. այդ անձնուէր զինուորներուն մէջ շատ բան կը պարտինք. անոնք պիտի պսակեն վերջապէս մեր յոյսերն ու իղձերը. անոնց պաշտօնը սուրբ է և փափուկ, թողո՛ւնք որ գործեն, ու, եթէ հարկ ըլլայ, նուիրենք մեր անկեղծութիւնը, ստանձնենք մեզ ինկած շանքի բաժինը, թեթեւեղե՛նք անոնց տաժանելի բեռը. մեր ամենուս առաջին պարտականութիւնն է դա: Մեր մէջ կան ուրիշ ոյժեր անհատական թէ հաւաքական, որոնք արտաքին քաղաքականութիւնը կը պատրաստեն հայկական հարցին նպաստաւոր. յարգենք այդ փորձերը:

Կան ընկերութիւններ ալ, որ գաղութներուն մէջ պահել կը ջանան ազգային գոյութիւնը. քաջաբերնք այդ աղիւ ու պատկառելի ձեռնարկները: Ասոնք ամենքն ալ լա՛ւ, սակայն մեր որբերը, մեր բուրաստանին այդ խորշակահար ծաղիկները. թողո՛ւնք որ փճանան: Անոնք այսօր դահիճներու ձեռք մատնուած են. դահիճներ, որ իրենց արհեստին խորաթափանց հմտութիւնն ունին, որ գիտեն իրենց զոհը մեռցնել ո՛չ անմիջապէս, այլ կամայ կամաց. թոյն ունին անոնք, թոյն զոր կը հոռեցնեն մատղաշ որբուկներուն երակներէն

ներս, կը սառեցնեն տաքուկ ու անապական արեւը, որ կ'եռայ, չըջան կ'ընէ. արեւը կը փոխեն շարաւի. շուտով կ'ուծանայ մանուկն իր հայրենի սիրական առարկաներէն, շուտով ատել կ'սկսի մայրենի լեզուն ու կրօնքը, կը խորթանայ, նոր փորձանք մը կը դառնայ ազգին գըլխուն: Օտարները, Եւրոպացի թէ Ամերիկացի, Սաքսոն թէ Տեւտոն, Կեղտ թէ Լատին, Սլաւ թէ Եանքի, սովալլուկներ են, որոնք Փոքր Ասիոյ խորերուն մէջ որս փնտուելու ելեր են. ամէն մէկն ունի իրեն յատուկ զէնքը. Թուրքիան է իրենց արձակափայրը, արձակ համարձակ կ'արշաւեն ու իրենց արշաւանքին մէջ, փոխանակ արջեր ու խոզեր, գայլեր ու բորենիներ հալածելով արին քրտինք թաթխուելու, անախատ կ'որսան եղջիկներն ու այծեամբերը, գառնուկներն ու կաքանները:

Պէտք է ամեն Հայ լաւ ըմբռնէ օտար բարերարութեանց ներքին նպատակը. կէս դարէ աւելի է որ աւետարանական առաքելութիւնները կը գործեն Մայր-հայրենիքը, ու կէս դարու մէջ յաջողած են պառակտում առաջ բերել, Հայաստանեայց եկեղեցիէն զատելով շատ մը զաւակներ, որոնց հարազատութիւնն երկբայելի է: Արդ, այս արդիւնքները մեր աչքին առջև բերելով, դեռ պիտի տարակուսի՞նք թէ ի՞նչ կը նշանակեն Հայաստանի մէջ հաստատուած այդ որբանոցները: Ամենքն ալ, առանց բացառութեան, սպանդանոցներ են, ուր հայութեան մատաղ գառնուկները կը կտրուին: Ամենասուրբ աւանդութիւնները — ազգ, կրօնք, լեզու, պատմութիւն, գրականութիւն — պիտի խեղդուին թաղուին օտարամոլութեան ալիքներուն խորերը: . . .

Ի՞նչ ընենք ուրեմն. ձեռքերնիս խաչաձեւած նստի՞նք, անտարբեր դիտենք մարդկութեան ու ազգութեան դէմ գործուած այդ աննախընթաց սճիւնները . . .

Վե՛րջ ալ պէտք է այս բարբարոսութեան որ ի գործ կը դրուի քաղաքակրթութեան և մարդասիրութեան անունով. չե՛նք ուզեր մենք, իրենց թող ըլլայ, Եւրոպայի բարերարութիւնը, Քաջութիւնն ունենանք կրկնելու ողբացեալ բանաստեղծին վե՛մ հառաչանքը.

« Օտարն զմեզ թէեւ սիրէ հիւրաբար, Օտարն, ա՛հ, միշտ է օտար »:

Ամբիփե՛նք մեր ոյժերը, որոնք մեր կարծածէն անհամեմատ աւելի պատկառելի են. ոյժն ունինք մենք յուսահատին. վերջին ճգնաժամին շրջանը կը բոլորենք հիմայ, մեռնի՛լ կամ ապրիլ. որբերուն հոգը մե՛նք ստանձնենք, տա՛նք ինչ որ ունինք, մեր հոգիէն, մեր սրտէն, մեր կեանքէն. տա՛նք անտրտուն՝ ու գո-

հունակ սրտով, հաճոյքով բանանք մեր քաղկնէրը, ստուարացնենք թիւր որբախնամ ընկերութեանց անդամներուն, գործունէութեան նորանոր եղանակներ, հասոյթի անձանօթ աղբիւրներ ստեղծենք, իրարու մօտենանք, զիրար աւելի մօտէն ու լաւ ճանչնանք, գծենք մեր ուղին, ու շարունակենք անվհատ: Որբերու կեանքը, հայրենի սէրը, մայրենի լեզուն, բազմաշարքար եկեղեցին, հայութիւնը բովանդակ պարտք կը գնեն ամենուս վրայ, խորհելու և գործելու, առանց բռնուելու փոքրոգի ու գըձուձ նկատումներու ցանցին մէջ: Ի.

ՀԱՅՐԵՆԻ ԶԵՓԻՒՌԻՆ

Մինչ ես՝ հոգեովս լեռնէ լեռ՝
Բաղիւմ ետիք քարէ քար,
Դուն հեղ մ'երբէ՛ք հոս չ'ես գար,
Հէգ նժգէ՛ս չ'ես այցելեր.

Զեփի՛ւն անուշ հայրենի,
Սիրտս կարօտովդ կը հատնի.
Մի՛ որոնել տար ինձ քեզ,
Ամբան տապէն աղեկէզ:

Իջի՛ր Մասեաց սարերէն,
Անցի՛ր Երասխ ու Եփրատ.
Քաղցրիկ բոյրեր հեռոյ առատ,
Հասի՛ր հոս ինձ փութօրէն:

Ովասիսի դայրապատ,
Վերածէ՛ կեանքս-անապատ.
Որոշակներու փոխանակ,
Շնչէ՛ ճակտիս զու՛ն մինակ:

Գիշեր, ցերեկ՝ անանդորր,
Հերի՛ք է, ո՛հ, լամ ես հոս.
Արտասուքներս յորդահոս
Ա՛լ արիւնով են պղտոր:

Վէրքերս, վշտերս-ժայռ հսկայ,
Բուժող, քանդող մը չ'կայ.
Քանի որ ողջ եմ, զուն գէթ
Իս մի՛ զրկեր ինամբէզ:

Եկո՛ւր, հկո՛ւր, շուտ եկո՛ւր,
Զեփի՛ւն անուշ հայրենի.
Թող կարօտովդ չ'հատնի
Սիրտս որբերու կերակուր:

Ամբերուն մէջ այս օտար,
Դուն ինձ եղի՛ր հոգատար.
Ետիք՝ հոգեովս ցաւազար,
Թող չ'բաղխիմ քարէ քար:

Գահիրէ ԲԻՈՒՍԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

« Նոր Դար » ի մէջ կը կարգանք .

Հայոց Հոգևոր Իշխանութիւնը 400,000 ռուբլի պահանջի դատ մը բացած էր կրթական նախարարութեան գէմ, այն բանին համար որ կողմատու գայրոցական իշխանութիւնն Ախլայի Հայոց ուսումնարաններն իր իրաւասութեան ենթարկած ատեն՝ ապօրինի կերպով տիրացած էր նաև Ս. Փրկիչ եկեղեցիին պատկանող կառուածներուն, Այդ գործը կը քննուէր Մայիս 20 ին թիֆլիզի նահանգական դատարանին մէջ, Դատարանը որոշեց ճանչնալ Ախլայի Ս. Փրկիչ եկեղեցւոյ սեպհականութեան իրաւունքը յիշեալ կայաւածներուն վրայ, և պահանջել գայրոցական իշխանութենէն՝ դատաւարութեան ծախքերը 2411 ռուբլի 20 կոպէկ :

Մարաշէ հասած տեղեկութիւնները շատ սղբալի կը ցուցնեն որբերուն կացութիւնը : Մարաշի ամբիկեան բողոքական Որբանոցներուն մէջ կան այնոր 300ի մտ երկսեռ որբեր, որոնք չնորհիւ որբանոցներու տեսուչ պատուելի Մէկայիմի եռանգագին ջանքերուն, իրենց կրօնն ու մայրենի լեզուն իսպառ մոռնալու դատապարտուած են և այնպիսի դատարարական մը կ'ստանան, որ վաղը, երբ գայրոցէն ենեն, մէկ հատ չ'պիտի գտնուի որ հայ մնացած ըլլայ Հետեւեալ օրինակը գաղտնիք մը կրնայ տալ մեր վերև յայտնածներուն վրայ :

Ձէյթունցի որբ աղջիկ մը, որ հիմայ Մարաշու բողոքականաց որբանոցն է, նամակ մը կը գրէ Ձէյթուն գտնուող իր եղբոր և կը յորդորէ զայն որ հրստարի Հայոց եկեղեցիէն և Աղթարան յաճախէ, նամակին մէջ կ'սպաննայ իր եղբոր գինք այլևս եղբայր չ'նկատել, որովհետև, կ'ըսէ ջերմեռանդ որբուկը, առանց բողոքականութեան քրիստոնէութիւն չ'կայ :

Աւելի տխուր տեղեկութիւններ կը հասնին Ձէյթունի Ս. Աստուածածնի որբանոցին նկատմամբ, հոն պատապարուած որբերուն թիւն էր անցեալ տարի Օգոստոսին՝ 83, յետոյ 15 օսմ ոսկւոյ ամական թոշակով բաւականաչափ սնունդ ու հագուստ մատակարարել անկարելի ըլլալով՝ Հոգաբարձութիւնը պարտաւորուած է որբերութիւն իլեցնել 40ի, և հիմայ 8000 զրուչի պարտք մ'ալ ունի Որբանոցը : Հոգաբարձութեան անգամներէն Կիւլվանտեան նազարէթ աղա որ Ձէյթունի առաջնակարգ հարուստն է, կ'առաջարկէ հանգանակութեամբ մը գոցել այդ բացը, իր կողմէն խոտանալով տալ կարևոր գումար մը, այս խօսքին, սակայն, սառ չուր մը կը լեցուի ներկայ հոգատար անգամներուն վրայ և ամենքը կը ցրուին, իսկ որբերը կը մնան անպաշտպան, ահա՛ կայրութիւն մը որ ամենէն առաջ Կ. Պոլսոյ Ազգ. Պատրիարքարանի լուրջ ուշադրութեան առարկայ պէտք է գառնալ :

Կ. Պոլսոյ «Մաղիկ» օրաթերթի թիւ 68ի մէջ կը կը կարգանք հետեւեալը :

« Եգիպտոսի և լեկտրական թրամուէյները մեծագոյն անպատեհութիւն մ'ունենին մարդկային կեանքեր ոչնչացնելու :

Արդ, անակնկալ և տխուր մարդկային կորուստներուն առաջին առնելու համար՝ Գահիրէի նախարար և ծանօթ ազգայիններէն Արաբիկի Վարապետ էֆ. Միհանօֆ նոր գործիք մը հնարած է, որով այդ կարգի վտանգներն իսպառ կը ջնջուին : Բարենիշ մը Արաբիկիցոց հնարամտութեան, ինչ կ'ըսէք Բէշեան էֆէնտի :

Պատրաստուած նորահնար գործիքը ամեն կառքերու վրայ գրուելու համար՝ հեղինակը

առանձնաշնորհութիւն ձեռք ձգելու կ'աշխատի : Գործիքին անունը՝ հեղինակին անունով կ'ԱՐՍ. ՊեՏ յորջորջուած է » :

« Նոր Օր » ի յառաջիկայ թիւերէն մէկուն մէջ բանասիրական մը պիտի նուիրուի այս գիտին, որով հայ հանճարին գործնականութիւնն անդամ մ'ալ կը շեշտուի :

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ՄԱՐՕՔԻ ԽՆԴԻՐԸ

ՅՐԱՆՍԱ ԵՒ ԱՆԿԻԱ

Տէյլի էֆրէտէ կը հրատարակէ խօսակցութիւն մը, զոր իր Դանժէրի թղթակիցն ունեցած է Դանժէրի երոպական հիւպատոսի թարգմանին հետ : Այս անձնաւորութիւնը, ինչպէս կ'երևի, թղթակցին պատմած է թէ՛ Մեծ Վէզիրի մահուանէն ետքը՝ Սուլթանը զօրքերով շրջապատել տուաւ անոր ապարանքը, խուզարկութեան միջոցին անոր տան մէջ գտնուեցաւ փրանսական հնչուն ոսկիով հագարն գումար մը և թղթակցութիւն մը, որով կը յայտարարէր թէ՛ Մօնսա շարունակ յարաբերութիւններ ունեցած է ֆրանսական կառավարութեան հետ : Ասկից զատ շատ մը վաւերագիրներ ալ կային որոնք կը հաստատէին թէ՛ Մեծ Վէզիրը, առանց իր տիրոջ հաւանութեան, հաւանած էր կարևոր առանձնաշնորհումներ թողուլ ֆրանսայի :

Նոյն յրագիրը Որո՞ւ պիտի ըլլայ Ափրիկէն վերնագրին տակ հետեւեալ յօդուածը կը հրատարակէ :

« 1833 էն առաջ, ֆրանսա թիզ մը հող չունէր Ափրիկէի մէջ, իսկ հիմայ, իր տէրութիւնը կը տարածուի Ափրիկէան ցամաքին մէկ երրորդին վրայ :

« Հարուստ գաղութներու տիրանալու տենչով տանջուած, այնպիսի գործակալներ ունեցած է որոնց արարները քանի՛ քանի անգամներ քիչ մնաց որ շղթայաղբ ընէին պատերազմը :

« Միշտ Անգլիոյ նախանձառը, ջանաց զայն դուրս նետել Ափրիկէան արևմուտքէն, հետըզհետէ տիրացաւ Մատակասգարի, Թունուսի, Դահոմէյի, տարածեց իր թակարկութիւնը Թրիփօյի, Ուատայի, Սահարայի և Չադ լճի գրացի երկրի մը վրայ : Ու դարձեալ հասարակածին վերի մասերուն մէջ առիւծին բաժինն ստանալէն՝ ո՛չ այնչափ գոհ, սակից զատ Գոնկոյի Ազատ Պետութեան սահմանակից երկրի մը մէկ մասն ալ իւրացնել փորձած, և չ'է ուզած ճանչնալ Պէլճիքայի թագաւորին վեհապետութիւնը այս երկրներուն վրայ մինչև այն օրն որ Պէլճիքի վեհաժողովը ճանչցաւ իր նախամեծարութեան իրաւունքն այն պարագային որ Պէլճիքա հրատարէր այս երկրին վրայ իր գերիշխանութենէն :

« Բաւական է միայն յիշել Ֆաչօտան և Ֆրանսայի՝ Թրանսպարական պատերազմին մէջ բռնած սրդի դիրքը բերել աչքի առաջ, ըմբռնելու համար թէ՛ գէպերուն սրամազանութիւնն անյաղթելիօրէն կը բաշէ կը տանի գէպի պատերազմ, Ափրիկէի երկու գաղթային Մեծ Տէրութեանց միջև :

ԼՈՐՏ ՍԱԼՁՈՐԻԻ ԶԱՌԸ

Լոնարա քաղաքին պահպանողական ընկերակցութեան տարեկան հացիերոյթին մէջ, Լորտ Սալզպրի, Մայիս 29 ին ճառ մը խօսած է որուն մէջ կարևոր յայտարարութիւն մ'ըրած է Հարաւ-Ափրիկէան պատերազմին կարգադրութեան մասին :

Ահա՛ ճառին այդ հատուածին թարգմանութիւնը :

Գալով պատերազմին, կուսակցութիւն մը, զոր ես կրնամ կոչել Մարտադուրի (Stop the war) կուսակցութիւն, տարաձայնութիւն մը հանած

է իբր թէ ես հանդիսաւոր յանձնառութիւն մ'ըրած ըլլամ բնաւ երկիր չ'կցելու : Այդպիսի յանձնառութեան մ'երբէք դիտում ունեցած չ'եմ և երբէք չ'եմ գործածած բառեր, որոնք բանաւորապէս կարծել տան թէ ես այդպիսի յանձնառութիւն մ'ըրած ըլլայի :

Ես պարզապէս ուզած եմ յիշեցնել այն ամբաստանութիւնը թէ՛ մենք երկիրներու ուսկի հանքեր ձեռք ձգելու համար պատերազմին գիրկը նետուեր ենք եղբր : Ասի՛ մին է այն պժգալի զրպարտութիւններէն, որոնք, Տօգդ-Լէյժի աղքեցութեան տակ, տարածուած էին երոպական մամուլին մէջ, ես ուզեցի ջրել այդ սուտը :

Մենք սոսկալի զոհողութիւններ յանձն առինք ներկայ կուսին մէջ, և միակ ապահովութիւնը զոր կրնանք ունենալ արգիլելու համար երկրորդ անգամ պայթումը սոյն ահաւելի պատերազմին, թոյլ չ'տալ է որ նորէն մթերուին այսքան ընդարձակ սպառազինումներ, և չ'թողուլ երկու հանրապետութեանց անկախութեան աղօտագոյն ստուերը :

« Դեռ պատերազմին վախճանը չենք, բայց այժմէն որոշած ենք Հարաւ-Ափրիկէան խնդրին կարգադրութեան իբրև առաջին պայման գնել թէ այս պատերազմը ուրիշ անգամ պէտք չէ որ կրկնուի :

« Մեր պարտականութիւնը պիտի ըլլայ նաև պաշտպանել բնիկ ցեղերը, որոնք, մինչև ցարդ, մասնաւոր կերպով փաստուեցան, վերջապէս մեր պարտականութիւնը պիտի ըլլայ մեր քաղաքականութիւնը վարել ա՛յն կերպով որ կարելի եղածին չափ ընդհանուր հայտութիւն գոյանայ Հարաւ-Ափրիկէի մէջ, որուն բոլոր բնակիչները գառնան Բրիտանական կայսրութեան երջանիկ անդամները » :

Պէտք է գիտնալ թէ՛ Անգլիա չ'ուզեր որ այսպիսի պատահականութիւն մ'իրագործուի : Նոյնիսկ սոոյգ ալ է թէ՛ ինք կը զօհէ շատ մ'ընդարձակ երկիրներ, այսպիսի սղէտքէ զերծ մնալու համար :

Սակայն, դժբաղդարար, հաւանական է որ ինչ որ ալ ընէ, անօգուտ է վասն զի, մէկգի գնելով նոյն իսկ ցեղային ատելութիւնները, առևտրական պահանջները պիտի հարկադրեն Անգլիան օր մը չէ օր մը կուսի բռնուելու, եթէ կուզէ որ երկրագնդիս ամենէն հարուստ մասերէն մէկուն մէջէն դուրս չը նետուի :

ԱԶԱՏ ՕՐԱՆԺ. — Մինչդեռ, զիսաւոր

կեդրոններուն մէջ, հնազանդութեան արտայայտութիւնները մեծ թուով կը կատարուին, անգին հրատարակներ կը կազմուին երկրին ամեն կողմերը : Այսպէս Պօէրները նորէն ետ առած են Հէյլպրոն, ու վերջերս ալ, Քըրըմէն, Պաքի-Ուէսդ գաւառակին մէջ :

Տեղոյս « Որբերու Հոգատար » ընկերութեան Պատ. Տնօրէն խորհուրդը թերթիս Վարչութեանը զրկած է հետեւեալն ի հրատարակութիւն :

Տեղոյս ազգային Առաջնորդարան, Պոսի Պատրիարքարանի տեղեկագրած ըլլալով ի Գահիրէ կազմութիւնն « Հոգատար » ընկերութեան յօգուտ Արաբիկի որբերուն, Ամեն. Ս. Պատրիարքը բարեհաճած է օրհնութեան գիր մ'ուղղել ընկերութեանս՝ սոյն մարգարական ձեռնարկն մեծ աջակցութիւն մը նկատելով որբանամ գործին, կրկին պատճառներով նախ զի Արաբիկի ամեն տեղէ աւելի պէտք ունի այս տեսակ ընկերութեան մը գործունէութեան, և երկրորդ զի նիւթական միջոցներու հետձեռնելու ազգամար գրուարին կը լինի Պատրիարքարանի յաջողապէս ի զուլս հանել որբանամ գործը, առանց մարդասէր անձանց աջակցութեան կէ ազանց Որբանամ մարմնոց հաւաքական օժանդութեան, ինչ որ ահաւասիկ կոչուած է ընձեռն նորակազմ ընկերութիւնը : Նորին Ամենապատուութիւնը կը մաղթէ որ ընկերութիւնս գտնէ պէտք եղած զիւրութիւններն և կարենայ ամբողջ որբանոց մը հոգալ :

Ընկերութիւնն ստի է յառաջ բանակցութեան մտան ըլլալով Արարիկու Առաջնորդարանին հետ՝ տեղւոյն ազգային գիշերօթիկ որբանոցին մէջ պաշտպանելիք տաններկու որբերու ընտրութեան մասին, Առաջնորդարանն այս անգամ պատասխանած է եւ տաններկու որբոց ընտրութիւնը կատարելով՝ անուններն կարեւոր ծանօթութեամբ հաղորդած է ընկերութեան, որ յանձն առած է տարին վաթսուէն օսմ. ոսկի վճարել յիշեալ որբանոցին իր որբեկներուն համար:

- Անաւասիկ այդ որբեկներուն անուններն.
1. Յարութիւն Մամաս Սուպեան, 10 տարեկան
 2. Սուրէն Մարտիրոս Հազարեան 11 »
 3. Առաքել Գրիգոր Բերտեան 11 »
 4. Սեպուհ Եղիա Տէվէճեան 10 »
 5. Յակոբ Ստեփան Լուիկեան 8 »
 6. Փրիլպպոս Յակոբ Թաշճեան 13 »
 7. Գրիգոր Ստեփան Սէրայտարեան 13 »
 8. Յակոբ Պօղոս Պէրպէրեան 12 »
 9. Պերճ Սարգիս Յովսէփեան 11 »
 10. Մարտիրոս Յովհաննէս Մաղիկեան 10 »
 11. Սիմոն Սարգիս Միսաքեան 11 »
 12. Միհրան Պետրոս Գարազաշեան 11 »

Ասորն եւ ոչ մէկուն հայրն ողջ է, մայր ալ չունին, ութը՝ մայր ունին որք սակայն ծանրաբեռնուած են անչափահաս բազմաթիւ զաւակներով: Արարիկու Գեր. Առաջնորդը կը գրէ ընկերութեան այս 12 որբեկներուն ընտրութեան մասին. «Կրնաք վստահ ըլլալ թէ որբերու ընտրութիւնն կատարուած է անաչառ եւ խղճամտ կերպով, որչափով զանոնք այն ընտանիքներէն, ուր բազմաթիւ անդամներ կային, որք եւ այրիներ, եւ որոնց պարագաներն անկարող էին ամէնքը միասին խնամել գէթ չորաբեկ հացով մը. նմանապէս ուշադրութիւն դարձուած է այդ ընտրութեան մէջ, ընտրելիներու ուշիմութեանը եւ ընդունակութեանը, կարելի եղած չափով:»

Տնօրէն խորհուրդն ընկերութեան Պատ. Հիմնադիր Ժողովոյ այս որբոց յատկացուցած տարեթոշակ վաթսուէն օսմ. ոսկիէն, 15 ոսկին արդէն զրկած ըլլալով արարիկու Ազգ. Առաջնորդարանն, վերջին թղթատարով՝ Պոլսի Պատրիարքարանի միջոցաւ զրկած է 15 ոսկի եւս, որով ցարդ զրկուածին ընդհանուր գումարը եղած է 30 օսմ. ոսկի:

Տնօրէն խորհուրդն ընկերութեան վեցամեայ հաշիւը բոս կանոնագրի, պատ. Հիմնադիր Ժողովոյ մատուցանելու վրայ է, որու հաստատութեան յետոյ մէջ մի օրինակ պիտի հաղորդուի տեղւոյն Արարիկու Առաջնորդարաններուն, առաջնոցն ի քննութիւն եւ ի վաւերացումն եւ երկրորդին ի գիտութիւն եւեթ: Աւելի ետքը պիտի հրատարակուի այդ հաշիւը:

Ընկերութեան տեղւոյն առաջնորդարանէն վերաբերեալ կանոնագրին առաջին օրէն տպագրուած է եւ փափաքողներն կրնան օրինակ մը ձրիարար ստանալ, պարզապէս գիրով կամ անձամբ գիւմելով Գարբինեան տպարանն ի Պազար Մուրուր Գահիրէ:

Ընկերութեան բոլոր սոււմարներն, որ դրոշմայ ու թուագրեալ են տեղւոյն առաջնորդարանէն, անխտիր բաց են ամէն որբասէր ազգայնոց առջեւ, ընկերութեան անդամ եղած ըլլան կամ ոչ:

Տնօրէն խորհուրդն «Նոր Օր» թարնշան երեւման առթիւ հրատարակութիւնն կուտայ, ընկերութեանս զեռ կարճատեւ գոյութեան շրջանին մէջ արդէն ունեցած նուիրատուաց անուններն, որոց անգամ մ'եւս հրապարակուած կը յասնէ իր խորին շնորհակալութիւնն:

Ծագ. ողջ դր.

Պատ. Բարեգործական ընկերութիւն	200
Ազն. Տիկին Եւգենի և Եւգենիան ,	77
Մեծ. Տեառք	
Մամաս Թէրզեան ի ձիւղութի	578
Օհան Թօթվայեան ի Ձակաղիկ	195
Մարտիկ Գեորգոֆ ի ձիւղութի	60
Յակոբ Պաղճեան	20
Ղուկաս Գրեբճեան	20
Թօթք որբասէր ազգայիններ	70

Գումար 1220

Ընկերութեան վասպուրականի Պատ. Որբախնամին հետ կազմակերպած վիճակահանութեան մասին կարեւորը պիտի հրատարակուի ժամանակին

8 Յունիս, Ն. Տ. 1900

Գահիրէ

Հ Ե Ռ Ս Պ Ի Ր Ն Ե Ր

ԲԱՐԻՉ, 6 ՅՈՒՆԻՍ. — Կացութիւնն ի Ձին միշտ հանրակշիւ է: Դիւն-ձինն գնդերու փոքրիկ ջոկատներ անդադար ցամաք կերնեն:

2000 Ռուսեր իսկ կ'սպառուին կղեր:

ԴԻՆ. ՁԻՆ, 5 ՅՈՒՆԻՍ. — Պօքարները Բէքինի այժմ ընդհատուած երկաթուղին պահպանող Ձինական գնդերը ցրուելին, 60 չինացիք սպանուեցան: Պօքարները Դիւն-Ձինը կոխեցին. Եւրոպական գնդեր այս վայրկեան ցամաքը կ'ելնեն:

ԼՈՆՏՐԱ, 6 ՅՈՒՆԻՍ. — Մ. Նորմէն, Եէն-Շինկի անգլիացի քարոզիչը, որ անյայտացած էր. գաղանարար մորթուած է:

Փայլոց, Ձինու կացութեանը զրայ խորհրդածելով կ'ըսէ. «Յայտն է թէ՛ դէմ առ դէմ կը դռնուինք տաղ-նապի մը, որ կը պահանջէ ո՛չ միայն դիւանադիտական այլ եւ կարուկ միջոցներու գործածութիւնը:»

ՈՒՆԻՆԿԻԹԸՆ 6 ՅՈՒՆԻՍ. — Մ. Գօսթէր, Միսցիալ -Նանգազցի ներկայացուցիչն 'ի Բէքին, կը հեռագրէ որ կացութիւնը կը վատթարանայ: Թեթեւատյր թնդանօթաձիգ մը հրաման ստացաւ անմիջապէս Դիւն-Ձին երթալու:

ԼՈՆՏՐԱ, 6 ՅՈՒՆԻՍ. — Իրլանտական Եօմէնրի վաշտն է որ Լինտլիթ քով գերի բռնուած է Պօքարներէն (ՀԱՎԱՍ)

ՄԱՆՁԻՒ 5 ՅՈՒՆԻՍ. — Ջօրաժար Պրապանդ երկրացի խանգարեց Պօքարները Ֆիթապուրիի հիւսիսային կողմը: Այսօր թշնամին Բէքինէն մի քովն է, բրիտանական զօրքերէն պաշարուած:

ԼՈՆՏՐԱ, 6 ՅՈՒՆԻՍ. — Բրէզիլիայի առման լուրը կայսրութեան ամեն կողմը խանգաւան ընդունելութիւն մը գտաւ. Լոնտրա եւ Գանատա եղած ցոյցերը կը յիշեցնեն Մէքսիկի ազատման առթիւ տեղի ունեցածները:

ԼՈՆՏՐԱ, 8 ՅՈՒՆԻՍ. — Բիւթերի գործակալութիւնը կ'իմացնէ թէ՛ այս պահու. Ձինու մէջ քաղաքական գործողութեան մը խօսքը չկայ եւրոպական տէրութեան կողմէն. ներկայացուցիչները, ծովակալներն ու հիւպատոսները խորհուրդի գումարուեցան զբաղելու համար թէ՛ իրենց ազգայիններու կեանքն ու ինչքը պաշտպանելու ինչ միջոցներ պէտք է ձեռք առնեն: Մտղի չկայ որ տէրութիւն մ'առանձին կամ միւսներէն անկախօրէն գործէ հոն:

2000 Ռուսական զօրքեր Օտէսայէն մեկնեցան պաշարելով Մայրաքաղաք-Արեւելք. ուրիշներ կը պատարաստուին երթալու:

ԼՈՆՏՐԱ, 8 ՅՈՒՆԻՍ. — Նախագահ Բրիւկէր կ'ըստպանայ որ, մինչև իսկ եթէ 500 զինեալ մարդ մնայ, կ'ուր յամառօրէն պիտի շարունակէ եւ թէ պատերազմը դեռ նոր կ'սկսի:

Ա Ն Վ Ե Ր Ն Ա Գ Ի Ր

Դիտած էք որ այս միջոցին տեղական թերթերու մէջ կը կարգանք մանր շարք կը մեծամեծ անձնաւորութեանց, եղբուրեան մանրամասնութեամբ. թէ ո՛ր օր եւ ժամը քանի՛ն հիւանդացան, քանի՛ օր պառկեցան. այս միջոցին շերտաշափք քանի՛ աստիճան վեր ելաւ, վար իշուս եւ վերջապէս ժամը քանի՛ն կենաց թելը խրչեցաւ:

Եթէ մեռնողը խեղճ ու կրակ մէկն ըլլայ, ոչ միայն յրազրաց մէջ յիշուելու պատիւը պիտի չ'ունենայ, այլ նաեւ իր մտերիներուն եւ ընտանեաց անդամներուն նեղ շրջանակէն դուրս ոչ ոք պիտի գիտնայ թէ այնպիսի անձ մը գոյութիւն ունէր երկրի վրայ, միեւնոյն պիտի կը վայելէր, միեւնոյն օրը կը շնչէր, միեւնոյն կայայտ երկինքն կը գիտէր. բայց ասոնք այնքան բացայայտ ճշմարտութիւններ են որ անոնց խօսքն անգամ ընել չ'արժէր. բան մը՝ որ մեր նպատակէն ալ դուրս է:

Անշուշտ չ'նք խորիւր զի յիշեալ մեծարթութեամբ անձնաւորութեանց մահուան պատճառներէն մին ալ այն է թէ գրամական կարողութեան չ'ունենա՞ գոնէ քաղաքիս ամենէն համբաւաւոր բժիշկներուն ինամոց գիմնուելու: Անտարակոյս անոնց հոյակապ բնակարաններուն առջեւ՝ եթէ ոչ շարունակ՝ գէթ օրը առնուազն հիգ-վեց անգամ Տօթք օր Գ. ներու եւ Եօթք օր Տ. ներու կառքերը շարուած կ'ըլլային: Բայց նախախնամութեան վճիռը պէտք է կատարուի. պէտք է որ ամեն ծնած՝ առանց բացառութեան՝ հողին մէջ ամփոփուի: Հիւանդութիւնները ուրիշ բան է՛ն բայց միայն հոն առաջնորդող պնքնակամ ուղիներ, զոր մարդ իր ձեռքով կը պատրաստէ:

Հոս հարցում մը. եթէ հիւանդութիւնները անքնական, այսինքն՝ բնութեան խորթ զաւակներն են, բնական մահն ո՞րն է:

Պատասխան. — Երեւթեանէ՛ խոր ձերութեանէ յառաջ եհած մահը: Յակոբ Նահապետին եւ ուրիշ Նահապետներուն մեռած մահը:

Բնութիւնը հիւանդութեան պէս շարարար զաւակներու ծնունդ չտար, մինք կընք որ կտոր կտոր կըլլանք զանոնք: Նախորդու արեքցութեամբ եւ անկտր կենցաղավարութեամբ, զոր մանրամասնելու փոյժն ու խնամքը կը թողու՞մ բարոյասոս(°) Մ. Յ. Գ. Ի, Կեղիակ «Նամակ առ Հայ երիտասարդ» յօդուածին, որ լոյս տեսաւ Արշալոյսի թիւերուն մէջ:

Մեր այդ ծնունդները՝ ինչպատ իրենց մեր հոգածութեան իբր վարձք՝ չ'են ուշանար վնդ հաղին ապին իջեցնելու: Հիւանդութիւններն ալ ապականեալ զաւակներու կրպիտագիտութիւնն ունին:

Մանաւանդ այս տարի կարծեմ տուն չ'մնաց որ չ'իւրեքնկալէ, այդ սեւագէմ ծնունդները. 'ի միջի այլոց ժանտատեղ կոչուածը:

Իմ մասին՝ եօթանասուն ու հինգ օր պահեցի — յաւկամայս — գայն իմ տանս մէջ, իմ երեք զուակներու վրայ: Վերջապէս սարսափելին աննեռացաւ, առանց՝ փառք Աստուծոյ՝ ուրիշ հետք ձգելու բայց միայն ծախք եւ յոգնութիւն:

Թէ ինչպէս շատ անգամ մի եւ նոյն հիւանդութեան իշխաններ կը մեռնին եւ խիստ պարզ մահկանացուներ չ'են վնասուիր — համեմատաբար, այս գաղտնիքը լուսարանել իմ կարողութիւնէս վեր է:

Մեր ծանօթ եւ անծանօթ Հայազգի բժիշկներուն թանկագին աջակցութեամբ եւ խորհուրդներով եւ ձեռքէս եկածն ըրի, եւ մնացեալը Աստուծոյ թողուցի. «Տէր մեռուցանէ եւ Տէր կեցուցանէ:»

Հոս միտքս բան մը կուզայ: Մենք Հայերս ո՞ր բժիշկներուն գիմնու ենք. մերայնոց թէ օտարացի եթէ մէկ կողմ ձգենք փորձառութեան խնդիրը, որ խիստ մեծ դեր կը խաղայ բժշկական ասպարէզին մէջ, կարծեմ թէ Հայ անհատ մը գէթ այնքան ատակ է բժշկութիւն սորվելու, որքան օտարազգի մը: Հակառակը խորհիլ պատուաբեր չ'ըլլար մեղի համար, եւ ո՛չ ալ ճշմարիտ Արդ եթէ բժշկութեան կը հաւատանք եւ բժշկի պէտքը կ'ըզգանք, բնական է որ մենք մեր համարիները նախընտրենք:

Իսկ եթէ օտարազգիներուն բժշկական կարողութիւնը գիտակցօրէն գերազանցելով հանդերձ, մեր բազազուրկ եղբայրները Հայ բժիշկներուն կը զրկենք՝ ինչպատճէ, որպէս զի ձրիարար խնամուին, բսել է որ՝ բարեխորթեան քողին տակ՝ հաւանական մահուան կը յանձնենք այն զբաղղները:

Ուրիշ ենթադրութիւն մը. եթէ որ եւ է Հայ Տօթք օր մը գնահատելով հանդերձ, օտարներուն գրպանը կը լեցնենք մեր գրամը, օտարամոլ եղած չ'ենք ըլլալ:

Իրաւ է որ օտքթօր Պողոս, Կիրակոս եւլն, օտարներէն շատ ետ մնացած են ճոտարանութեան կողմէն. իրենց փողկապը այնպէս դրուած չէ ինչպէս է օտքթօր Ալպէրինը, իրենց բարեւելու ձեւը խիստ կը տարբերի օտքթօր Եուզանքիի, օտքթօր Ճէյմսի, օտքթօր Ճիօ-վանիի եւլն. բարեւելու ձեւէն եւլն. եւլն եւ ասոնք այնպիսի բարեմասնութիւններ են որ . . . ինչ ըսեմ, ունայնասէրները միայն զիտեն ասանկ բաներուն բուն արժէքը:

Եթէ համարձակէի պիտի առաջտղէի որ մեր այս արեւտաւորներուն բժշկել, սփոփել բարձրագոյն եւ ազնուագոյն արեւտ է «յարգը քաջ ճանչնալք, զանոնք քաջալերենք, միմիայն մեր անկախները անոնց չ'ի զրկենք, աշխատինք որ մեր գրամը մեր մէջ մնայ, որպէս զի՝ 'ի պահանջել հարկին՝ երես ունենանք դարձեալ մենք մեզի գիմնու որեւէ բարեգործական պէտքեր հօգալու համար. 'ի մի բան՝ ուզգախո՞՞ ըլլանք եւ ազգաւոր:

Տ Ի Պ Ա Ր Դ Ե Ս Բ Ս Ը

Այն ազգը՝ փոքր թէ մեծ՝ որ նկարագիր չ'ունի եւ կամ բաղղէն առանձնաշնորհուած չ'է, այն ողորմելի ժողովուրդը, որ իր ապրած դարու յատազգիական ձգտումներուն ու պահանջներուն հետեւ չ'է գիտէ, կ'ապրի այնպիսին լոկ ապրած ըլլալու ու օրին մէկն ալ, այսպէս կամ այնպէս, ծովու պզտիկ ձկներու նման ճիւղ կոկորդիլոսներէ կուլ տրուելու համար: Այժմ որ քնացողը, տկարը, սակաւիկ բացառութեամբ, հզօրին, արթնունին բերնի պատրաստ պատտան են:

Ճարտն եւ Ձինաստան. պատմութեան հին եւ մութ լաբիրինթոսին մէջ չ'ըլլալով, միտող ուրիշ աստ-ցոյցներ ալ: Անցեալը անցած է, անցեալէն աւելի ներկայով հետաքրքրուինք, որ այնքան իրկաւէտ օրինակներ կրնայ ընծայել մեզ:

Ինչո՞վ մեծցած են մեծ ազգերը Ամերիկա՞ Գրիստափօր-Քոլումպոսի արժանի այդ գաւազը, թի մը տեղւոյն բնական հարստութեանէն՝ քիչ մ'ալ իր անդրաշխարհեան զիրքէն բազաւորուած, իր մէջ իսկ excentric դարագացումի ունակութեան շնորհիւ այնքան կը յառաջանայ, որ այսօր ձերացած՝ Եւրոպային մարդասիրութեան դասեր տալու կ'ուշեցնող կ'օրորուի Յունասա, ազատութեան, եղբայրսիրութեան ու հաւասարութեան սուրբ հրորդութեան քիչ մը կերպարաւ նախորեալ հայրենիքը, 1870—71 պատերազմին անեղ աղէտքէն մահամերձ, քառօր զար վերջ՝ անգամ մեւս յոտից ց'զուրի սպառազինեալ իր թշնամիին պատկանաք կ'աղղէ: Գերմանիա՞ Մարտ աստուծմէն կը նպաստաւորուի, ու իր երկաթի կամքովը (sic) մէկէն մեծ աղբի մը համբաւը կը վայելէ Ռուսիա, հիւսիսի հսկայ արջը, յաճախ պատերազմներէն կ'օգտուի, իր այլապահարական զիրքին ու մարդաշատութեան քանակին մէջ գտնելով իր ուժը: Անգլիա վերջապէս, Հոմմէական անեղ պատերազմներն մը կ'երազէ . . . իր անյազ ազատութիւնը պտտցնելով ամեն զինասանձ ազգելու չափ:

Չ'զբաղինք պոետիկներով ու հաւանինք որ, ազատ մտնորորտը, աշխատութիւն, յարատեւութիւն, եւ ո՛ր գիտէ, քանի՛ քանի ընտիր ձիրքեր ու յատկութիւններ նպաստած են անոնց, մեծ ազգեր ըլլալու մեծ գործին մէջ: Անհատական ուժեր թանկագին բարիքներ ընծանած են այդ վսեմ գործին, յաճախ մասնաւորներու ձեռքով հիմնուած է անոր կատարը, զոր այսպէս հաւաքան ուժը եկած է ամբողջացնել, ամբակուռ եւ հոյակապ:

Հաւաքական ուժ ըսելով՝ մենք հոս ըմբռնենք ցեղի մը միահամուռ հայրենասիրական միութիւնը: Նախ եւ առաջ, անո՛վ է ուրեմն որ այնքան յառաջացած են այսօր այդ մեծ ազգերը, այս կամ այն ներքին պատակտունները ի հայելու չ'առնելով, որ աւելի ծայրահեղ յատաշղթմութեան մը արդիւնքն են:

Է՛հ, մե՛ք ալ ազգ մ'ենք, ո՛րքան ալ փոքր: Մենք ալ ունինք մեր իղձերը, մեր յոյսերը, մեր այս ու այն ձիրքերը: Ազատութեան համար այնքան արիւն թափեցինք, հերոսներ շատ ունեցանք ու ոչխարներու նման շատ ալ մորթուեցանք. ու աշխարհ պահ մը մեզմով զբաղեցաւ: Խուլ մնաց Եւրոպա, լռեցին զեկամարները, բայց ժողովուրդը համակրեցաւ մեզի, առանց զիսնալու թէ՛ մենք չ'ունինք զեռ ազատ ապրելու իրաւունքը, քանի որ մեզ կը պակսի վսեմ նկարագիրը, հայրենասիրական միութիւնը: Կրօնասիրութիւն մ'ունենինք, որով դարէ՛ դար պահպանած էինք մեր գոյութիւնը, լեզուն, պատմութիւնը, ու, աւա՛ղ, մեր նախնիքներէն մեզ կը մնայ միայն, ատելի ու աշխարհաւեր հրիտակը, ինչ որ մեր տունը հիմնովին քանդած է. անմխարանութիւն, Հայութեան հալածող զեւր: Եւ ըրպացիներ ըսելու վարժ են. « Եթէ բուն Ամերիկացի եղած չըլլայի՛ պիտի նախընտրէի Անգլիացի նգած ըլլալ: Տոնասացի մը՝ Գերմանացի, իսկ զու, ո՛ր սիրելի ընթերցող, ի՛նչ կրես եթէ Հայու մը բերնէն լսես. « Եթէ հայ ծնած չըլլայի՛ հայու հետ բնաւ ապրիլ չ'պիտի սիրէի »:

Ո՛հ, դատապարտելի՛ խոստովանութիւն . . . կուզե՞ս սակայն ըմբռնել ասոր ճշմարտութիւնը, մտի՛ր մեր հանրային կեանքին մէջ: Գանի՛ ապականեալ բարքեր, Աստուած մեծ, դարերու ստրկութենէն վատասեցած ցեղի մը յատուկ Այո՛, ողջամիտ, անկեղծ, անհասկնաղիք մէկ մը, քիչ շատ օտարներու հետ շփուած, թերեւս առջի օրէն թողուր մեր ընկերական կեանքը, եթէ ուրեք ուրեք չ'անդիպէինք հազուադիւր զէմբռուռ, որոնք մաքրափայլ օրինակէն անդալարար կը կազդուրուի թուլացած մարդը, գայթակղած ազգասիրութիւնը:

Եւ որովհետեւ ամենուս պարտքն է գնահատել ամէն արժանիք, այն պահուն մասնաւոր երբ դիմակաւոր հացկատակներու վտանակներ կը վիտան հրապարակին վրայ, հաճոյք կզգանք ծանօթացնել ընթերցողին տարօրինակ զէմբ մը:

Ո՞վ է ան . . . Գիտեմ թէ որքան ակոսներու կրօնում պիտի տեղացնէ վրաս. հարցմանս պատասխանը, հառաջ մը սակայն, ողորմելի հայագիտութեամբ je m'en f . . . բառին փնտռուած նշանակութիւնը գտնալ չ'կրնալուս համար:

Ո՞վ է արդ ան, որ կարելի է « Ընկերութեան հողին » մակդիրով մկրտել:

Թերեւս ենթադրուի որ զբաղէտ մը, բանաստեղծ մը ակնարկել կամենամ . . .

Ոչ, տարի մ'առաջ հանդիպեցայ իրեն որճարանի մը մէջ, պարզապէս տգէտ՝ խրմուլը Մարաշի մ'ըլլալ կարծեցի զինք: Իր ցամբած զէմբը, խոհուն նայուածքը եւ որ աւելին՝ մայրաամուլ մօրուսը՝ անհամակրելի թուեցան ինձ: Ամիսներ կանցնին սակայն, ու կը ճանչնամ զինք, ու կը զարմանամ անոր անխնամ այլ համեստ զէմբին տակ գտնելով զարմանալի մարդ մը, տիպար Հայ մը, ուսմամբ թէեւ թերի՛ բայց բուն իսկ զարգացեալի մ'առողջ զազափայնեցող, եւ օրինակելի ազգասիրութեամբ մը անգորուած:

Չարմանքս կարծես հիացման փոխարկելու աստիճան՝ հետաքրքրուեցայ գիտնալ թէ՛ արթօք արատ մը, բիծ մը կրած է իր անունը հանրային գործունէութեանը մէջ:

— Ինչպէ՞ս է, հազարու մէկ . . . սիրելի պարոն, պատասխանեց իր մէկ սենեկակիցը: Հայաստանի այս կամ այն գաւառին մէջ, հակառակ իր ուսման պակասին, տարիներով ընկերութիւններու մասնակցելէ ու հոս ալ՝ շարունակ՝ լռելեայն գործելէ, տալէ ու ողորմելէ յետոյ՝ հիմակ եւս, ամիսէ մ'ի վեր, ինքզինք լքած, « Նոր Օր » ի հրատարակման համար կ'աշխատի, ցերեկը հանգիստ չունի, իսկ գիշերը՝ քունը Շատ անգամ, զիջերուսն ժամը տանեմ մէկն է, ու զեռ ինք ընթրած չէ. ի՛նչ փոյթ: Իր սնունդը իր նպատակին համար է: Նախօրէն ըսած է, « l'impossible n'est pas français » իսկ այս մարդուն նշանաբանը՝ « կամքը ամէն բանի յաղթող է »: Եթէ թերութիւն մ'ունի՛ անհամար է եւ բարկացող. Գործ, ժողովոյ անդամոց հետ կը բռնուի,

Մայր-Դիւանը իր թմբուկներէն սեփականել կուտայ, ամենուն ալ հետ միշտ հաշտ երթալու պայմանաւ սակայն Համարձակախօսութիւն մ'ունի, որ ճակտիդ կը զարնէ, առանց վշտացնելու:

Օրէնքը կը յարգէ՛ բայց ձեւակերպութիւնները, հայացի ձեւակերպութիւնները մասնաւոր, ողբով չափ կ'ատէ: Աչքը լո՛յս. « Նոր Օր » ն ալ երեւցաւ, ու հիմակ, Յակոբ Նահապետի նման, վերջին իղձ մ'ունի. պիտի աշխատի, պիտի տքնի, պիտի քրտնի, պիտի վազէ ու պիտի մուրայ, հոգ չէ թէ ճամբուն վրայ՝ իր արագաբայլ վազքին մէջ՝ պղտոր ջուրի մէջ ձուկ որսալ փնտոզներու հանդիպի, փութերու՝ որ թեթեւօրէն ոտքը արիւնտոսն: Լսարան-Ընթերցատան բացումն ալ լուս աչքով տեսնելու փառքն ալ պիտի ունենայ ու ապա՞ . . . եւ ապա իսպառ պիտի քաշուի հանրային կեանքէն: Ալ զուած է անկէ, մազերը անով ձերմկցան »:

Է՛հ, Աստուած իմ, իրաւունք ունի խեղճ մարդը . . . Բայց երբ ընթերցատունը բացուի, ու որքան ատեն որ « Նոր Օր » ք արեւ վայելէ, գէթ Եզրիպտոսայ՝ երախտապարտ՝ պէտք է յիշէ ու փառաբանէ այդ պատուական մարդը, այդ օրինակելի Հայն ու անձնուէր հայրենասէրը:

Gloria veris patrice amantibus. U. O.

ԵԳԻՊՏԱԿԱՅՈՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Շար. 1 թիւէն)

Ժողովրդին յատաշղթմական դատակարգէն քանի մը վառվառուն երիտասարդներ, 1899ի դարնան, — երբ Ընթերցատան ընկերութիւնն իր գունը փակելով՝ զոյգերը կը փոխադրէր Ազգ. Առաջնորդարանը — իրարու մտեցան եւ սկսան կարծիքներ փոխանակել նոր Ընթերցատան ընկերութիւնն մը կազմելու զազափարին վրայ. զեղեցի՛կ զազափար, որուն իրազորուած սակայն կախում ունէր անձնուէր ու ձեռնհաս ընկերներու աջակցութենէն, ուստի, որոշեցին անմիջապէս տեղ մը գումարել, խորհրդակցելու համար այս նպատակի յաջողութեան միջոցներուն վրայ. շուտով աւարտած էին նախապատրաստական աշխատութիւնները. կանոնադիր մը գծուած էր, քանի մը փորձ ու բանիմաց աշխատակիցներու ջանքերով ու զազափարը մուտ գտած էր արդէն հասարակութեան խաւերուն մէջ. համակիր ու համախո՛ծ ընկերներուն թիւն օր աւուր կ'աճէր: Ընկերութեան հիմնադրը կը մնար զին, ու գրուեցաւ:

Առաջին Ընդհ. ժողովը գումարուեցաւ, կարգացին կանոնադիրն ի ներկայութեան եւ ի լուր 40է աւելի ընկերներու. կանոնադիրն ինչ ինչ յօդուածները վիճակաբանութեան գրուեցան ու ժողովը ցրուեցաւ, զուարթ տպաւորութեան տակ:

Այնուհետեւ քանի մ'անգամ տեղի ունեցան Ընդհ. ժողովոյ արտակարգ գումարումներ, Մայր-Դիւանի ու Գործ. ժողովոյ ընտրութիւնները կատարուեցան քուէարկութեամբ եւ ընկերութիւնը մտաւ գործունէութեան շրջանին մէջ: Այդ միջոցին, կանոնադիրն վերջնական վաւերացումն առաւ, Խառն ժողովոյ մը մէջ նորէն ձեռնուելով ու կրկնուելով յօդուածները, կանոնադիրը վաւերացաւ Ընդհ. ժողովոյ կողմէն:

Գործ. ժողովը, պաշտօնաբաշխումները կատարելէ քանի մ'ամիս յետոյ, նկատելով սկզբնական քայլերուն մէջ կրեւոցող զժուարթութիւնները, ընկերութիւնը հաստատուն հիմքեր վրայ եւ յարատեւութեան մէջ զնելու համար, անհրաժեշտ պէտքն զգաց իր Դիւանի փոփոխումին եւ քուէարկութեամբ նոր Դիւանի ընտրութիւնը կատարուելով՝ արդիւնքը պաշտօնապէս հազորուեցաւ Մայր-Դիւանին:

Ընկերութիւնը, Լսարան-Ընթերցատուն անունը կրելով, բնական էր թէ՛ պարտաւոր էր, հասարակութեան փափաքներուն գոհացում տալու եւ իր նպատակին ալ զոնէ մասամբ ծառայելու համար, նախապէս Լսարան մը տալ: Գործադիր ժողովը՝ փութացած էր անդրանիկ լսարանին պատրաստութիւններն ընկելու եւ առ այս հրաւիրած էր ի պաշտօնէ Տիար Կ. Պապայեանը, եւրոպական համբաւ վայելող մասնագէտ-երկրորդը, բանախօսել «Դիւղատնտեսութեան» վրայ Սակայն Գործ. ժողովոյ պաշտօնական հրաւերն իր հաստատական պատասխանով պատուող յիշեալ մասնագէտ հայրենակից պարոնը, հակառակ «Արշալոյս»ի մէջ տեսնուած պաշտօնական յայտարարութեան, եւ հակառակ իր փափաքին, բանաւոր արգելք մ'ունեցաւ, բանախօսելու: Սակայն, այն օրուան լսարանը չ'յետաձգելու համար, Տիար Մ. Հայկունի, բազմաշխատ ուսուցիչը հաճեցաւ գոհացնել Ապու Սալիլի թատրոնը խոնած բազմութիւնը, բանախօսելով «Աշխատասիրութեան ու գի՛նի վրայ: Երկար կ'ըլլայ թուումն ընել ընկերութեան բոլոր գործառնութիւններուն: Միայն պէտք է յիշել համակրելի Հայ նկարիչ Տիար Ե. Տէմիրճեանի

« Գեղարուեստին Գերը » բանախօսութիւնը: Ունկնդիր հասարակութեան կողմէն յայտնուած փափաքի մը համաձայն, այդ բանախօսութիւնը, իբրեւ Ա. հրատարակութիւն, ու հասոյթի աղբիւր, ինչ որ կը տրամադրէ հիմնական կանոնագրի Ձևը յօդուածը, տպագրութեան արուեցաւ 500 օրինակ, որոնց մէկ մասը մատուցուած է Գաղաքի ընկերացաւր պաղպիներուն, որոնք սիրայօժար ընդունած են ընկերութեան այդ գուճաքեայ նուէրը, փոխադարձօրէն խոստանալով իրենց ներթական եւ բարոյական օգնութիւնները՝ ընկերութեան:

Այդ գրքոյկէն շատ մ'օրինակներ ալ պիտի բաշխուի ընկերութեան բոլոր անդամներուն, առաջիկայ Ընդհ. ժողովոյ գումարումին:

Ուրախ ենք յիշելու նաեւ թէ՛ Գործ. ժողովը չըրջարեւաններ ուղղած է թէ՛ Եզրիպտոսի եւ թէ՛ Արտասահմանի կարեւոր ազգայնոց աջակցութիւնը խնդրելով Լսարան-Ընթերցատուն. առաջին անգամ՝ Նորին Բարձրութիւն Իշխան Լուսինեանի կողմէն ընկերութիւնն ստացած է ներթական ու բարոյական քաջալերանքը:

Թէ՛ Գործ. ժողովը ի՛նչ զժուարթութիւններով յաջողած է անցեալ ձմեռուան ներկայացումը կազմակերպել ի նպաստ ընկերութեան, զա ծանօթ է բոլոր ընկերակիցներուն:

Ներկայացման արտագրած հասոյթը, միացնելով ընկերներուն ամառվարներէն գոյացած գումարին, անմիջապէս Լսարան-Ընթերցատուն մը բանալու ձեռնարկուեցաւ. սակայն խնդիրը լուրջ խորհրդածութեան ենթարկելէ ետք՝ համոզուեցաւ Գործ. ժողովը թէ՛ գոհացուցիչ պայմաններու տակ Լսարան-Ընթերցատուն մը բանալու եւ զայն քիչ յետոյ փակելու հարկին տակ չ'գտնուելու համար բանաւոր էր առ այժմ ընթերցատան բացումն յետաձգելով՝ ընկերութեան հասոյթի նոր աղբիւրներ գտնել, մօտ ապագայի մէջ, ապահովապէս ունենալ կրնալու համար Լսարան-Ընթերցատուն մը. եւ որպէս զի ընթերցատան բացումն ուշանալը չը զրկէ ընթերցատէր հասարակութիւնը իր մասաւորական հաճոյքէն, Մայր-Դիւանի հետ քանիցս բանակցելէ, խորհրդակցելէ ետք՝ վերջապէս որոշեց հրատարակել ՆՈՐ ՕՐ՝ կիսաշաբաթաթիւթով, ընկերութեան գոյութիւնն ապացուցանող եւ հասարակութեան ընթերցատիրութեան պապակը անցնող աղբիւր մը հասոյթի, որ միեւնոյն ժամանակ բարոյական ու մասաւորական կեանքն ազնուացնելու եւ բարձրացնելու պիտի ծառայէ:

Այս ընկերութիւնն այսօր իրաւունք ունի յուսալու, եւ մեծ հաւասար ունի ապագային վրայ, բաւական է որ իր անդամները, միշտ միեւնոյն կորովով ու եռանդով շարունակեն իրենց սկսած գործը. այն ատեն վրաստան ըլլալ պէտք է թէ՛ Գահիրէնակ հասարակութիւնը չը պիտի խնայէ ընել ինչ որ պէտք է եւ տալ ինչ որ կը պահանջէ հանրութեան չափը:

Գահիրէի Լսարան-Ընթերցատան ընկերութեան մասին տրուած այս տեղեկութիւնները, ո՛չ « ըսի », ո՛չ « ըսաւ », ո՛չ « կը լսենք », ո՛չ « կը կարծենք » ի վրայ հիմնուած են, այլ քաղուած են ամենահաւաստի աղբիւրէ:

Դայով Աղբիւրանդիոյ ընթերցատիրաց ընկերութիւններուն, փափաքելի է որ ի մօտոյ լսենք անոնց խաղաղասիրական գործունէութիւնն եւ բերկրութեամբ աւեռները հասարակութեան թէ՛ այդ երկու ընկերութիւնները, համազգի եւ համասպասակ, ձեռք ձեռքի տուած՝ սկսած են համերաշխութեամբ աշխատել Եզրիպտոսայոց մտքի ազգասիրութիւնը, կանխակալ կարծիքները, յոռի բարբերը ջնջելու վեհ նուիրական գործին:

Լսարան-Ընթերցատուն ընկերութեան պարզ անդամ Կ. ԵՐԶԻԿԱՍԵԱՆ

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Կը խնդրուի « Նոր Օր » ի Պատուական ընթերցողներէն որ, եթէ թերթը ձեռքէ առնել ուզելով՝ բաժանորդագրուիլ չ'են փափագիր, հաճին իրենց զրկուած թերթերը վերադարձնել վարչութեան, միայն ուշադրութիւն ընելով իրենց հասցէն անեղձ պահելու, որպէս զի սխալմամբ նորէն թերթ չը զրկուի իրենց:

Ա Զ Դ

Լսարան-Ընթերցատուն ընկերութեան Պատ. Գործ. ժողովը կը ծանուցանէ արգոյ ընկերներուն որ հաճին իրենց յետնալ ամսական պարտքերը վճարել ընկերութեան հաւաքիչ եւ գործակատար Պ. Յովհաննէս Գալուրմաճեանի, փոխան ընկալագրի Պ. Պ. Շաւարշ հրատարած է: